# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2025 թվականի N 1633-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-073-0251-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.98503 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 42-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի չորրորդ հոդվածով, 25-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ, 80-րդ, 81-րդ և 94-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը՝ 15:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանում տեղի ունեցած մրցույթի արդյունքների մասին թիվ 1 արձանագրությունը՝ ***ո ր ո շ ու մ ե մ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0251-0006 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի 0.98503 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 5 (հինգ) տարի ժամկետով, տարեկան 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել 2025 թվականի հոկտեմբերի 15-ին Ալավերդու համայնքապետարանում կայացած մրցույթի հաղթող Սմբատ Սպարտակի Աղաբեկյանին:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հողամասի վարձակալության իրավունքով տրամադրման դեպքում չեն սահմանափակվում այլ անձանց իրավունքները և չեն խախտվում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 15
ք. Ալավերդի

Ձև N 5

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ

(ստորագրություն) (անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.

«15» հոկտեմբերի 2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«15» հոկտեմբերի 2025թ.

1. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն Ալավերդի համայնքի Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0251-0006 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 0.98503 հեկտար մակերեսով հողամասը, 5 /հինգ/ տարի ժամկետով՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով:
2. Հողամասը մրցույթով վարձակալության հանձնելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը 16.05.2025թ. N 82-Ա
3. Մրցույթին մասնակիցների թիվը 1
4. Վարձակալվող հողամասի համարը, ինդեքսը 06-073-0251-0006
5. Նախավճարի չափը /հազ. դրամ/ 1.5
6. Հողամասի նախնական գինը /հազ. դրամ/ 30.0
7. Մրցույթում լավագույն պայմաններ առաջարկված հողամասի վարձավճարը՝ 30000
8. Վարձակալի տոմսի համարը 1
9. Վարձակալի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները, իրավաբանական անձի անվանումը, հասցեն հեռախոսահամարը Սմբատ Սպարտակի Աղաբեկյան, գյուղ Մեծ Այրում, 3-րդ փողոց, 54 տուն, նույն. քարտ՝ 010698256, տրված՝ 31.10.2018թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 099-19-19-32:

Վարձակալ ____________________
/ստորագրություն/

Հանձնաժողովի նախագահ ____________________ Դավիթ Գեղամի Ղումաշյան
(ստորագրություն) (անունը, հայրանունը, ազգանունը)

Արձանագրող ______________________ Լիանա Պարույրի Կոստանդյան
(ստորագրություն) (անունը, հայրանունը, ազգանունը)

Անդամներ ______________________ Հարություն Ալբերտի Զավարյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________ Տիգրան Անդրանիկի Թամազյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________ Էրմինե Արիստակեսի Գաբրիելյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունն

/գրանցվում է մրցույթի կայացման օրը՝ ըստ մրցույթի արդյունքների/

Ձև N 6

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ ՂՈՒՄԱՇՅԱՆ

_______________________________
/ստորագրությունը/

Կ.Տ.

«15» հոկտեմբերի 2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«15» հոկտեմբերի 2025թ.

Մրցույթի անցկացման տարեթիվը 15.10.2025թ.
Անցկացման վայրը ք. Ալավերդի Զ. Անդրանիկ 8/1, Ալավերդու համայնքապետարան
Մրցույթի հանված հողամասերի թիվը և մակերեսը 19 հողամաս, 9.2338 հա
Մրցույթի մասնակիցների թիվը 12 /տասներկու/
Մրցույթով հանձնված հողամասերի թիվը և մակերեսը՝ 10 հողամաս, 7.25238 հա
Նախավճարի ընդհանուր գումարը 11260 դրամ
Մրցույթից հետո վերադարձված նախավճարի չափը 1800 դրամ

### ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| NN Ը/Կ | ՀՈՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՀԱՍՑԵՆ | ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳԻՆԸ /հազ. դրամ/ | ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂԹՈՂԻ ՄԱՍԻՆ | ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0251-0006 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.98503 հա վարելահող | 30000 | Սմբատ Սպարտակի Աղաբեկյան, գյուղ Մեծ Այրում, 3-րդ փողոց, 54 տուն, նույն" քարտ՝ 010698256, տրված՝ 31.10.2018թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 099-19-19-32: | անկանխիկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0238-0011 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.42139 հա վարելահող | 13000 | Տիգրան Գուրգենի Նազարյան, գյուղ Մեծ Այրում, 10-րդ փողոց, 15 տուն, նույն" քարտ՝ 018581173, տրված՝ 18.06.2025թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 094-79-09-93: | անկանխիկ |
| 3 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0237-0006 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.77075 հա վարելահող | 24000 | Սահակ Գուրգենի Նազարյան, գյուղ Մեծ Այրում, 2-րդ փողոց, 41 տուն, անձնագիր՝ AV0204533, տրված՝ 03.05.2022թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 077-91-85-41: | անկանխիկ |
| 4 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0211-0006 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 1.16304 հա վարելահող | 35000 | Մելսիկ Ռաչիկի Մաղաքեյան, գյուղ Մեծ Այրում, 3-րդ փողոց, 16 տուն, նույն" քարտ՝ 010793487, տրված՝ 15.07.2019թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 093-15-97-36: | անկանխիկ |
| 5 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0211-0007 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.73627 հա վարելահող | 22000 | Կամո Մինասի Ղարագոզյան, գյուղ Մեծ Այրում, 7-րդ փողոց, 62 տուն, նույն" քարտ՝ 012145371, տրված՝ 11.09.2020թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 093-57-40-36: | անկանխիկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0251-0003 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.67468 հա վարելահող | 21000 | Սմբատ Սպարտակի Աղաբեկյան, գյուղ Մեծ Այրում, 3-րդ փողոց, 54 տուն, նույն" քարտ՝ 010698256, տրված՝ 31.10.2018թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 099-19-19-32 | անկանխիկ |
| 7 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0222-0005 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.55141 հա վարելահող | 17000 | Էռնեստ Արտուշի Ղահրամանյան, գյուղ Մեծ Այրում, 4-րդ փողոց, 73 տուն, անձնագիր՝ AS0503785, տրված՝ 13.02.2019թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 094-60-85-07 | անկանխիկ |
| 8 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0240-0007 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.33119 հա վարելահող | 11000 | Տիգրան Գուրգենի Նազարյան, գյուղ Մեծ Այրում, 10-րդ փողոց, 15 տուն, նույն" քարտ՝ 018581173, տրված՝ 18.06.2025թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 094-79-09-93: | անկանխիկ |
| 9 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0211-0009 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.9053 հա | 27200 | Բորիս Ժորիկի Շիրվանյան, գյուղ Մեծ Այրում, 10-րդ փողոց, 15 տուն, նույն" քարտ՝ 014378764, տրված՝ 08.02.2022թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 077-10-64-91 | անկանխիկ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վարելահող | | | |
| 10 | գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու | Մեծ Այրում գյուղի կադաստրային քարտեզի 06-073-0236-0001 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 0.71332 հա վարելահող | 25000 | Արշավիր Սերգեյի Պետրոսյան, գյուղ Մեծ Այրում, 6-րդ փողոց, 140 տուն, նույն" քարտ՝ 015345150, տրված՝ 21.12.2023թ. 055-ի կողմից, հեռախոսահամար՝ 094-47-50-74: | անկանխիկ |

Մրցույթի կազմակերպիչ ______________________ Դավիթ Գեղամի Ղումաշյան
(ստորագրություն) (անունը, հայրանունը, ազգանունը)

Արձանագրող ______________________ Լիանա Պարույրի Կոստանդյան
(ստորագրություն) (անունը, հայրանունը, ազգանունը)

Անդամներ ______________________ Հարություն Ալբերտի Զավարյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________ Տիգրան Անդրանիկի Թամազյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

______________________ Էրմինե Արիստակեսի Գաբրիելյան
(ստորագրությունը) (անունը, հայրանունը, ազգանունը)

/լրացվում է մրցույթի կայացման օրը՝ ըստ մրցույթի արդյունքների/